ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 40 - Ա
28 նոյեմբերի 2013 թ

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արխիվային գործի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 932 - Ն որոշման պահանջները

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի արխիվային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու և Հայաստանի ազգային արխիվի Գեղարքունիքի մարզային մասնաճյուղին հանձնելու համար ստեղծել մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Աղեկյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, նախագահ

Բաղալյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Մելքոնյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Մուշեղյան Յու. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժ/պ

Ղազարյան Ն. - մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

Մաթևոսյան Ն. - մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ

Ցոգոլակյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի վարիչ

Բաղեյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

Ղուկասյան Վ. – մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ

Չիչակյան Ռ - մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի կրտսեր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կազմակերպել մարզպետարանի աշխատակազմի արխիվային փաստաթղթերի հանձնման գործընթացը և մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը կատարված աշխատանքների մասին ներկայացնել տեղեկատվություն մարզպետին:
3. Սույն կարգադրության կատարման վերահսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ